Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

зала 7 отд.
шкаф
полка 6
№ 191

Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

ԵՐԿՈՒ ԹՌՉՈՒՆ

№ 17.

Հրատարակութիւն
ԹԻՖԼԻՍԻ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԹԻՖԼԻՍ
Էլեկտրաշարժ Տպարան „ՀԵՐՄԷՍ“
Ընկ. Մադաթ. փ. № 15.
(84)

891.99
Փ-31

Арм.
2-3624 г
13 APR 2011

Վ. ՓԷՓԷՋԵԱՆ

891.99
Ф 31

ԵՐԿՈՒ ԹՌՉՈՒՆ

№ 17.

ԳԻՆՆ Է 3 ԿՈՊ.

Հրատարակութիւն
ԹԻՓԼԻՍԻ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Инв. № 11145

ԹԻՖԼԻՍ
Տպարան «ՀԱԵՐՄԷՍ» ԸՆԿ. 1905 Թ.
Մաղաքեան փողոց № 15
(84)

39971

Дозволено цензурою. 28 января 1905 г. Тифлисъ.

39884-63

ԵՐԿՈՒ ԹՌՉՈՒՆ

Պատշգամբի վրայ էր կախուած նրանց վանդակը։ Երկու հատ էին. արու և էգ։ Երկուսին էլ բնից հանել, վանդակի մէջ էին մեծացրել։

Խնամում էին, շատ լաւ կերակրում, ամեն օր էլ տեղը մաքրում։ Իսկ վանդակը զարդարում էին կանաչ ծղօտներով, հացաբոյսի փնջերով։

Երբ մեծացան, սկսեցին երգել։ Ի հարկ է ոչ լաւ, ոչ զարթ, բայց երգում էին։ Եւ զիտակից չէին, որ իրանց երգը վշտալից շեշտերի մի մեղեդի էր, սարկական կրծքերից բղխող ողբի համերգ։

Եւ նրանց լսողները յուզւում էին, տխրութեամբ համակւում ու ասում.

—Օ՛, խեղճ թռչուններ, սիրուն դեղձանիկներ...

Այդ կերպով էին գգուում նրանց, գովասանում համերգը։

Եւ եղաւ որ մի օր վանդակի դուռը բաց մնաց, մի ամբողջ օր բաց։

Զարմացան թռչունները, երբ տեսան այդ. զարմացան և իրարու նայեցին։ Երկուսի մտքի մէջ էլ ծնել էր, որ այդ լայն բացուածքից կարող էին դուրս գնալ և այլ ևս դերի չըմնալ։

Դուրս գնալ։ Բայց ո՞ւր. ի՞նչ կար արդեօք այդ անհուն տարածութեան մէջ, այդ պսպղուն, շողշողուն աստղերի կողմը, այդ արծաթագօծ լոյսի տակ։

Շարժուեցին, թառից ցած իջան միմեանց ետևից և մօտ գնացին դռնակին։ Բայց չըհամարձակուեցին դուրս ելնել. գլուխները միայն դուրս հանեցին և վեր նայեցին։

Որքա՜ն աստղեր... Իսկ լուսինը, նրա սփռած լոյսի մէջ երևցող տների ցից-ցից տանիքները, քամուց շարժուող ծառերի կատարները...

Դուրս չելնե՞լ արդեօք։

—Գնա՜նք, շշնջաց էգը։

Բայց չըշարժուեցին տեղից. վախենում էին։ Երկուսն էլ յիշեցին վանդակի կողքից սուրալով անցնող մեծ հրէշ-թռչուններն ու նրանց անյագ, վայրենի հայեացքները։ Յիշեցին մանաւանդ խորամանկ կատուին։

Եւ սակայն բաց դուռը գրաւում էր. աղատ օդը, շողշողուն երկինքը փորձում էր նրանց...

—Պիո՛ւ, պիո՛ւ, կի՛ւի, կի՛ւի...

Ճնճղուկ էր. երբէք վանդակ չըտեսած, պապերով ու նախնիքներով գերութեան չ'ենթարկուած ճնճղուկ։

Կանգնել էր պատշգամբի ձողի դլխին և վանդակի ներսն էր նայում։

Այդ ի՞նչ էր. երկու թռչուններ էին այնտեղ. և այն էլ ազնուականներ, դեղին մեծութիւններ։

Եւ տես մէկ ինչպէ՞ս կծկուել կպել էին իրար, երկաթէ վանդակի մէջ պարփակուած։ Կերակուր էլ ունէին։

Ապա մէկ տեսնենք ինչ են ուտում այդ գերի մեծութիւնները։

—Կիւլի, կիւլի...

Եւ նա թռաւ վանդակի գլխին ու նստեց երկաթէ ցանցաւոր տանիքի վրայ։

—Բարև, ձերդ ազնուութիւններ. ինչո՞ւ էք կծկւել այդ շրջանակի մէջ։

Դեղձանիկները վեր նայեցին։ Ոչինչ. ճնճղուկ էր միայն. սորին տեսակի լեռնական մի թռչուն։

—Ա՛հ, ա՛հ, շարունակեց ճնճղուկը —այդ ինչ ազնիւ կերակուրներ էլ ունէք. վանդակի մէջ այդպիսի կերակուրներ...

Այն ժամանակ դեղձանիկ-արուն վեր նայեց և ասաց.

—Մենք կուշտ ենք. այս կերակուրը զզուեցրել է մեզ. կուզե՞ս եկ, կեր։

—Ներողութիւն, շնորհակալ եմ. ծիծաղեց ճնճղուկը.—երբէք չէի ցանկալ վանդակ մտնել, նոյն իսկ եթէ ինձ թագաւորութիւն տային այնտեղ...

Մթթէ դուք հանգիստ էք դրա մէջ... Ես իմ ազատ օդն ու լեռները չեմ փոխի ձեր ամբողջ հանգստութեան հետ։

—Մթթէ այդքան լաւ է լեռներում և դրսում, ճնճղուկ. հարցրեց էգը ներսից։

—Լա՛ւ... ծիծաղեց զւարթութեամբ ճնճղուկը.—ո՛չ միայն լաւ է, այլ հրաշալի, տիկին։ Մէկ նայեցէք էէ՛... Բարձրում, երկնքի կապտութեան մէջ այդ սևին տուող արտոյտները տեսէք ինչպէ՞ս են ճախրում, ինչպէ՞ս ճլւլում, պարում... Զէ՞ք զզում ծաղիկներից՝ զեփիւռի ժողոված ու բերած բուրմունքը։ Իսկ արևը. տեսէք ինչպէս պայծառ ու տաք՝ լուսաւորում է, ամեն բանի կեանք ներշնչում...

—Իսկ եթէ յանկարծ զեփիւռը փոթորկի փոխւի՞, արևը ծածկւի և անձրև տեղա՞յ...

—Բա՛հ... երևի ձեր փայլուն հագուստների մասին էք հոգում։ Մթթէ՞ ծառի խոռոչ, ժայռի ստորոտ և կամ այլ թագստոց քիչ կայ։ Ապա սա ծրինելոյզների գագաթները, ապա բոյները

—այնքան տաքուկ, այնքան փափուկ ու ապահով...

Էգը թոթուեց իրեն և մօտեցաւ դռնակին։

Այն ժամանակ ճնճղուկը նկատեց, որ վանդակը բաց էր։

—Տէր Աստուած, աղաղակեց նա.— յիմա՞ր էք դուք. ահա դուռն էլ բաց է, ինչո՞ւ էք ուրեմն կծկուած մնացել. դուրս եկէք գնանք ինձ հետ ընկերներիս մօտ—այնտեղ—ձորում, սիրուն առուակների եզերքին, թփիկների տակ լողացէք, զովացէք, ազատ օդ շնչէք...

—Ուրեմն այդքան լաւ է, հա՞, այնտեղ—ձորում. հարցրեց նորից էգը։

—Բայց այո՛, տիկնի՛։ Մի՞թէ չէիք կամենալ, օրինակ, մէկ բարձրանալ մի ծառի վրայ, նստել տերևների շուքի տակ, ապա թափահարել թևերը, սլանալ վեր, օդը ճղել, օրօրուել—ճախրել, իջնել արտը, մտնել հացահատիկների մէջ, կտցահարել—կշտանալ և երբ յոգնած ես, գնալ—լուացուել ցատկռտող ջրվէժի փրփուրներով և յետոյ անցնել

—մտնել ծաղիկների տակ ու ննջել նրանց ստուերներում...

Արու դեղձանիկը, որ կծկուած իր տեղում, լսում էր լեռնական ճնճղուկի բանաստեղծական ոգևորութիւնը, ասաց հեգնօրէն.

—Իսկ եթէ յանկարծ ուրուրը պնդէ ետևիցդ և դու սոսկումը կրծքումդ, խելքդ կորցրած՝ ընկնես ամեն կողմ և պահուելու տեղ չըգտնես...

—Երևի վանդակի մէջ շատ մնալով՝ կորցրել էք տեսողութիւնը, գոչեց ճնճղուկը.—մի՞թէ աչք չունիք տեսնելու, որ թշնամին հեռուից գալիս է. մըժդուկ խօ չէ՞, որ չընկատուի. հրէշային մեծութեամբ բան է... Տեսար թէ չէ, կծիկդ ծալիր և լեռներդ քաշուիր. քի՛չ թագստոց կայ ամեն կողմ, ամեն ծառի խոռոչի մէջ, ամեն ժայռի խորքում։ Մի բոպէ—և վտանգն անցել է. այնուհետև դուրս կըգաս, մի լաւ կըծիծաղես և կըսկսես ուտել, պարել, ազատ օդ ծծել ու ճախրել...

—Այո, այդ բոլորը լաւ. խօսեց

նորից յոռետես արուն.—միայն մոռանում ես, ռամիկ կարճամիտ, որ կարող են արտերը քաղուած լինել և դու օրերով տաք արևի տակ կըթափառես առանց ոչինչ գտնելու, ծարաւից կըպապակւես՝ առանց ջուր տեսնելու...

—Օ՛հ, ձերդ ազնուութիւն, ծաղրեց ռամիկ ճնճղուկը.—չէ՞ք կամենալ որ այդպէս ժամանակ ռամիկներս գնայինք և մարդկանց դիզած կալերից՝ ձեզ համար հացահատիկներ բերէինք և հազարաւոր աղբիւրներից էլ ջուր...

...Եւ էգ դեղձանիկը, որ մինչև այդ ժամանակ անյագութեամբ լսում էր, յանկարծ մի ոստիւնով դուրս թռաւ վանդակից և նստաւ ճնճղուկի կողքին։

Որպէ՛ս բաբախում էր սիրտը, որպէ՛ս դողում էր նա։

—Օ՛, ճ՛.. գոչեց ներսից սարսափած արուն։ Ճնճղուկն էլ մի վայրկեան խօսել չըկարողացաւ։

—Թշւառ, աղաղակեց արուն իր

ընկերոջ.—այդ ի՞նչ արիր, շո՛ւտ, ներս եկ, քանի կատուն չէ հասել։

Էգը բնազդմամբ կծւեց, շուրջը նայեց և կպաւ ճնճղուկին։

—Մի վախենալ, տիկին, ծիծաղեց ճնճղուկը.—կատուն այստեղ չի հասնի. և եթէ հասնի էլ, ի՞նչ կարող է անել։

—Ի՞նչպէս թէ ինչ...

—Այո, բաւական է քիչ զգոյշ լինել և շրջահայեաց. տեսար կատուին—թռիր դէպի վեր և ամեն. ինչ վերջացել է։ Գազանները դէպի վեր թռնել չըգիտեն. Նրանք միշտ գետնի վրայ են սողում... մենք ի՞նչ գործ ունինք գետնի երեսին։

—Իրաւ է. ասաց տիկինը.—և ինչ լաւ էլ է այստեղ. ազատ. ո՛ր կողմ ուզենաս կըթռչես... Ե՛կ այստեղ, ընկեր, դուրս եկ մեզ մօտ։

—Աստուած ո՛չ անէ, գոչեց արուն ներսից.—ասել են որ կնոջ խելքն էլ ռամկի խելքի պէս կարճ կըլինի—այժմ ճիշտ դուրս եկաւ։ Պիտի տուժես յի-

մարութիւնդ, կին դու, բայց ուշ կը-
լինի...

—Կիւլի, կիւլի, ձերդ վախկոտու-
թիւն, քրքջաց ճնճղուկը.—մնացէք ուրեմն
ձեր երկար խելքով՝ վանդակի մէջ, իսկ
մենք, մեր կարճ խելքով, կերթանք ա-
զատ ապրելու... Այնպէս չէ՞, տիկին,
կրգաս։

—Գնանք։

Ու թռան։

—Պիու, պիու... կանչեց բարձրից
ճնճղուղը.—Եկ, եկ, եկ մեզ հետ...

Բայց արու դեղձանիկը վանդակի
մէջ կծկուած՝ նայում էր դէպի վեր
պացողներին և սարսափից դողում։

Քիչ յետոյ մի վերջին «կիւլի, կիւլի»
ևս լսեց և ապա երկու թռչուններն
անհետացան երկնային կապտութեան
խորքերում։

Եւ մնաց արուն վանդակի անկիւ-
նում կրծկուած, աչքերը ազատ անհու-
նութիւն դարձած, դէպի անծանօթ,
աներկաթ և անվանդակ հայրենիքը։
Եւ այդպէս անշարժ, կերակրի ու ջրի

մօտ կուչ եկած՝ երազում էր, տրա-
մաբանում... միմեայն երազում, տրա-
մաբանում...

Երեկոյեան դէմ տանտիկինը տե-
սաւ բաց դռնակը. տեսաւ որ էգը
խուսափել էր, ազատութիւն ստացել։

—Զա՞ր... կոչեց նրա հասցէին։

Յետոյ զննեց փիլիսոփայաբանող,
տրամաբանող ու հանգստութիւն սիրող
արուին՝ կծկուած վանդակի անկիւնում։

—Տխմա՞ր... ասաց արհամարհանօք,
և վանդակի դուռը փակեց։

Այս զրոյցը մի տիկին պատմեց ինձ։

«ԹԻՖԼԻՍԻ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ»

Ընդունում է տպագրութեան յարմար գրուածքներ—վիպական, ժողովրդականացրած գիտական, առողջապահական, պատմական, գիւղատնտեսական, մանկական և այլն. գրուածքները լինելու են 1—2 տպագրական թերթի ծաւալով։

Հեղինակների և թարգմանիչների վարձատրութեան չափը որոշում է «Ընկերութիւնը»։

Հարկաւոր են գիրք տարածող գործակալներ՝ բաւական ձեռնտու պայմաններով։ Գործակալների անունները կը յայտարարուեն թէ գրքերի վրայ և թէ թերթերում։

Ընկերութեան հասցէն.

Въ г. Тифлисъ.

Въ Тифлисское Издательское Т-во,
Г. Бабурянцу, п. я. за № 187.

ՏՊԱԳՐՒԵԼՈՒ ԵՆ

Վ. Փափազեանի՝ Ստամոքսի համար 5 կ.
» Մարդագայլը . 10 կ.
Մելք. Եսայեանի՝ Օրէնքը
Պատկեր Բալախանու կեանքից. . . 3 կ.
Մ. Գօրկիյի՝ Եմելիան Պիլեայ. Թ. Մուշէ վ.
Մ. Նօրդաուի՝ Տօնի գիշերը. Թ. Լ. Բաբայեանի. և այլն։

Շուտով ձեռնարկուելու է նաև ռուսերէն մի շարք գրուածքների տպագրութիւնը։

Գրքերի գլխաւոր պահեստը գտնուում է Թիֆլիսում, Ընկերութեան գործավար Գ. Բաբուրեանի մօտ.

(Դուարցօվայա փողոց, Առևտր. Տուն Ն. Բոզարջեանի)։

Պահեստատեղից գիրք պահանջողին 30% զեղչ. եթէ պատուէրը 25 ր. հասնի՝ ճանապարհածախսը ընկերութեան հաշուին է։ Վճարը պիտի լինի կանխիկ. կարելի է նաև վերադիր վճարով. կոմիսիայով՝ ոչ ոքի։

ԹԻՖԼ. ՀՐԱՏ. ԸՆԿ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. ԹԱԹԱԽՄԱՆ ԳԻՇԵՐ, պատմ. գրոյց Լէօյի. 2-րդ տպ. (սպառուած) . 5 կ.
2. 26 ՏՂԱՄԱՐԴ ԵՒ 1 ԱՂՋԻԿ, վէպիկ Մախսիմ Գօրկիյի. Թարգ. Մուշէ վարդապետի . . . 5 կ.
3. ԽԵՆԹԸ և ուրիշ գրոյցներ, Վ. Փափազեանի (սպառուած) . . 10 կ.
4. ԿԵԱՆՔԻ ԴԱՍԸ. պատմուածք Ա. Ահարոնեանի, 2-րդ տպագր. . . 5 կ.
5. ՍՊԻՏԱԿ ԾԱՂԻԿ. Նովէլլա, Էլ. Օժէշկօի Թարգմ. Ս. Շահվերդեանի . 5 կ.
6. ԱՐՏԻՍՏԸ, վէպիկ Շիրվանզադէի . 15 կ.
7. ԵՂՕԻ ՔՈՌ ԲԱԽՏԸ, պատմուածք Շահրիարի (սպառուած) . . 3 կ.
8. ԵԱՊՕՆԻԱ, (համառօտ տեսութիւն) Խ. Խաչատրեանի . . . 3 կ.
9. ԴԱՆԿՕԻ ՍԻՐՏԸ, Մակսիմ Գօրկիյի, Թարգ. Ա. Աթայեանի . . 3 կ.
10. ԻՄ ՈՒՂԵԿԻՑԸ, Մակսիմ Գօր'կիյի Թարգ. Ա. Աթայեանի . . 10 կ.
11. ՄԵԾ ՓԱԿԱՆՔ և ԱՌԻԻԾԻ ՄԱՀԸ Վ. Փափազեանի . . . 3 կ.
12. ՊԱՅՏԱՌԻ ՀՈԳԻՆ և ԱՆԿԵՂԾ ԸՆԾԱՅ, Վ. Փափազեանի . . 4 կ.
13. ԽԵԼՕՔ ԱՔԱՂԱՂՆԵՐ ԵՒ ԴՐԱԽՏԸ, Վ. Փափազեանի . . . 5 կ.
14. ՍԻՐՈՅ ՀՈՎԻՏԸ, Ա. Աթայեանի . 3 կ.
15. ՎԻՇԱՊ և ուրիշ գրոյցներ, Վ. Փափազեանի . . . . 5 կ.
16 ԵՐԱԶ—Մելք. Եսայեանի . . 3 կ.
17. ԵՐԿՈՒ ԹՌՉՈՒՆ—Վ. Փափազեանի . 3 կ.
18. ՄԻ ՌՈՒԲԼԻ...—Մելք. Եսայեանի . 3 կ.

ՊԵՏ ԿԵՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0378135

59 970
2-3624